«ՋիԷնՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ
2014թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

## Բովանդակություն

Անկախ աուդիտորական հաշվետվություն
ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 3

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 4

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական
արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն 5

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
ամփոփ հաշվետվություն 6

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 7

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 8

**KPMG Armenia cjsc**
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

**Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ**
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

## Անկախ աուդիտորական հաշվետվություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՋիԷՆՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «ՋիԷՆՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի («Ընկերություն») 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք դրական կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2015թ. ապրիլի 22-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

*Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 *«Հաշվետվության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ»* պահանջների համաձայն:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, Ընկերության 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են նշված ֆինանսական հաշվետվություններին՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Տիգրան Գասպարյան
Տնօրեն

Տիգրան Գասպարյան
Գործընկեր

KPMG Armenia cjsc

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
22 ապրիլի 2015թ.

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

| հազ. դրամ | 2014թ. | 2013թ. |
|---|---|---|
| Ակտիվներ | | |
| Հիմնական միջոցներ | 11,852,054 | 10,634,963 |
| Ոչ նյութական ակտիվներ | 830,415 | 739,900 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 320,153 | 347,855 |
| Փոխհատուցելի ԱԱՀ | 181,921 | - |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով | 52,720 | 320,368 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **13,237,263** | **12,043,086** |
| | | |
| Պաշարներ | 86,969 | 105,245 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 1,441,571 | 1,326,318 |
| Բանկային ավանդներ | - | 977,795 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | 86,423 | 86,423 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 34,656 | 16,587 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **1,649,619** | **2,512,368** |
| **Ընդամենը ակտիվներ** | **14,886,882** | **14,555,454** |
| | | |
| **Սեփական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 1,000,000 | 1,000,000 |
| Չբաշխված շահույթ | (3,017,685) | 591,552 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **(2,017,685)** | **1,591,552** |
| | | |
| **Պարտավորություններ** | | |
| Հետաձգված եկամուտ և ստացված կանխավճարներ, ոչ ընթացիկ մաս | 2,040,130 | 2,394,404 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **2,040,130** | **2,394,404** |
| | | |
| Բանկային օվերդրաֆտներ | 256,014 | 255,320 |
| Հետաձգված եկամուտ և ստացված կանխավճարներ, ընթացիկ մաս | 364,285 | 357,620 |
| Վարկեր և փոխառություններ | 12,409,171 | 7,633,410 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 1,834,967 | 2,323,148 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **14,864,437** | **10,569,498** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **16,904,567** | **12,963,902** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **14,886,882** | **14,555,454** |



Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

| **հազ. դրամ** | **2014թ.** | **2013թ.** |
|---|---:|---:|
| Հասույթ | 3,575,883 | 2,612,739 |
| Ձեռք բերված ինտերնետային տրաֆիկ | (869,077) | (679,231) |
| Ցանցային ենթակառուցվածքների վարձակալություն | (406,575) | (305,527) |
| Փոխկապակցման ծառայությունների գծով ծախսեր | (25,601) | (98,948) |
| Աշխատավարձ և աշխատակիցների այլ հատուցումներ | (663,043) | (483,451) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | (1,726,042) | (831,203) |
| Վերանորոգման և պահպանման ծախսեր | (294,653) | (82,788) |
| Այլ գործառնական ծախսեր | (802,238) | (557,811) |
| Այլ գործառնական եկամուտ | 49,082 | 12,439 |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | **(1,162,264)** | **(413,781)** |
| Ֆինանսական եկամուտ | 2,208 | 228,829 |
| Ֆինանսական ծախսեր | (2,421,479) | (381,588) |
| **Զուտ ֆինանսական ծախսեր** | **(2,419,271)** | **(152,759)** |
| **Վնաս նախքան շահութահարկով հարկումը** | **(3,581,535)** | **(566,540)** |
| Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում | (27,702) | 119,443 |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | **(3,609,237)** | **(447,097)** |

4-ից 8-րդ էջերում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2015թ. ապրիլի 22-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Փարամազյան
Գլխավոր տնօրեն

Լիլիթ Այվազյան
Գլխավոր հաշվապահ



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Չբաշխված շահույթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. | 1,000,000 | 1,038,649 | 2,038,649 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | | | |
| Վնաս տարվա համար | - | (447,097) | (447,097) |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | **-** | **(447,097)** | **(447,097)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.** | **1,000,000** | **591,552** | **1,591,552** |
| | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2014թ. | 1,000,000 | 591,552 | 1,591,552 |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | | | |
| Վնաս տարվա համար | - | (3,609,237) | (3,609,237) |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | **-** | **(3,609,237)** | **(3,609,237)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.** | **1,000,000** | **(3,017,685)** | **(2,017,685)** |

| հազ. դրամ | 2014թ. | 2013թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | 3,736,966 | 2,302,929 |
| Մատակարարներին և աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (3,495,774) | (2,326,495) |
| **Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական միջոցներ** | **241,192** | **(23,566)** |
| Վճարված տոկոսներ | (609,089) | (371,783) |
| Վճարված շահութահարկ | - | (35,150) |
| **Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(367,897)** | **(430,499)** |
| | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ստացված տոկոսներ | 11 | 113,442 |
| Մուտքեր հիմնական միջոցների վաճառքից | 23,924 | 12,005 |
| Բանկային ավանդների մարում | 982,548 | 2,955,277 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (3,410,450) | (3,093,972) |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (224,726) | (749,608) |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **(2,628,693)** | **(762,856)** |
| | | |
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Մուտքեր փոխառություններից | 4,014,217 | 650,023 |
| Փոխառությունների մարում | (941,139) | (331,779) |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր** | **3,073,078** | **318,244** |
| | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | **76,488** | **(875,111)** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (59,113) | 7,675 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | (238,733) | 628,703 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի** | **(221,358)** | **(238,733)** |



Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

## 1. Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «ՋիԷՆՄի-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի («Ընկերություն») Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2015թ. ապրիլի 22-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների 5-ից 8-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Ընկերության գրասենյակից (Հայաստանի Հանրապետություն, ք. Աբովյան, Խաղաղության փ. 1):